

## ՇԱԽՄԱՏԻՍԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Գեղամյան Վ. Ղ. (Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի  
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան)

*vardan.geghamyan@sportedu.am*

Արոնյան Լ. Գ. (ՀՀ շախմատի ֆեդերացիա, Երևան, Հայաստան)

*Laronian@hotmail.com*

Ներկայացման ամս. 23.03.2021

Գրախոսման ամս. 05.04.2021

Տպագրության ընդունման ամս. 05.04.2021

Հոդվածում ներկայացված են շախմատիստի անձի հիմնական հոգեբանական առանձնահատկությունները՝ հիմնվելով տեսական մոտեցումների, դիտարկումների և հարցումների վրա, որոնք անցկացվել են բարձր որակավորում ունեցող շախմատիստների շրջանում: Շախմատային մրցումների՝ բազմամյա դիտարկումների արդյունքում բացահայտվել են նաև նոր հոգեբանական գործոններ, որոնք հատուկ պահանջներ են դնում շախմատիստի անձի նկատմամբ:

Հոգեկան բազմաթիվ հատկությունների շարքում առանձնացվել են նրանք, որոնք գերակշռում են մեծ և պատասխանատու մրցումների ժամանակ: Այսպիսով, սահմանվել են շախմատիստի որոշ անհատական առանձնահատկություններ, որոնք անմիջականորեն ազդում են նրա մրցունակության վրա, մասնավորապես՝ սթրեսակայունություն, կամային ջանքեր, ճանաչողական գործընթացների որակ, հոգեմոտոր ընդունակություններ և հոգեկան վիճակների վերահսկում:

Շախմատիստի անձին ներկայացվող հոգեբանական պահանջների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կոգնիտիվ գործընթացների դրսևորումները հատուկ և կարևոր դեր են խաղում նրա մրցակցային գործունեության հաջողության մեջ:

**DOI:** <https://doi.org/10.46991/SBMP/2021.4.1.032>

**Հանգուցային բառեր՝** հոգեբանական գործոններ, արդյունավետություն, շախմատ, մրցակցություն, գրոսմայսրեր, անձ, հույզեր, հոգեկան գործընթացներ:

Համաշխարհային շախմատի պատմության մեջ աննախադեպ է վերջին տարիների մրցակցային բեռնվածության նշանակալի աճը թե՛ մրցումների

քանակի, թե՛ կազմակերպման ձևաչափի և թե՛ բարձրակ մասնակիցների քանակի առումով:

Թեև նշանավոր գրոսմայստեր Մ. Մ. Բոսովինիկի պնդմամբ յուրաքանչյուր շախմատիստ տարեկան պետք է մասնակցի առավելագույնը 5-6 մրցումների, սակայն ներկայումս շախմատի միջազգային մրցաշարերը գրեթե 2-3 անգամ ավելացել են. բարձր վարկանիշ ունեցող յուրաքանչյուր գրոսմայստեր անցնում է շուրջտարյա մրցակցային փուլ՝ մասնակցելով 10-15 և ավելի միջազգային տարբեր նշանակություն ունեցող մրցաշարերի, չունենալով համապատասխան մարզումային գործընթացի կազմակերպման և վերականգնման ժամանակ ու հնարավորություն: Առավելագույն բարդություններ են նկատվում հատկապես տարբեր կանոնակարգեր ունեցող մրցաշարերի մասնակցելիս (դասական շախմատ՝ ժամանակային տարբեր սահմանափակումներով, բլից, արմագեդոն և այլն), լինում են դեպքեր, երբ միևնույն մրցմանը շախմատիստներին առաջադրվում է տարբեր կանոնակարգերով մրցախաղեր՝ դասական, բլից, հետո արմագեդոն և այդպես շարունակ: Այս ամենն իրենց հերթին մեծացրել են մրցակցային պայքարը՝ հասցնելով այն ծայրաստիճան համառ և լարված շախմատային «ռազմական» ճակատամարտի: Այդ են վկայում այսօր շախմատի միջազգային ֆեդերացիայի կողմից ներկայացված աշխարհի լավագույն շախմատիստների վարկանիշային աղյուսակում 1-ից 100-րդ տեղեր զբաղեցրած գրոսմայստերների մրցապայքարը, որտեղ 100-րդ տեղում գտնվող մարզիկի մասնագիտական հնարավորությունները, խաղային որակն ու պատրաստության մակարդակը գրեթե չեն զիջում լավագույն տասնյակում ընդգրկված շախմատիստների մարզական պատրաստության մակարդակներին: Ինչպես նաև՝ յուրաքանչյուր խոշոր միջազգային մրցաշարում առաջին և վերջին հորիզոնականներում գտնվող մարզիկների միջև ընթանում է գրեթե հավասար պայքար, կամ առավելագույն տարբերությունը կազմում է 0.5 միավոր [4, 5]:

Վերը նշված բոլոր այս և նմանատիպ այլ բազմաթիվ գործոններ բնորոշ են շախմատի մրցակցային պայքարին և իրենց առավելագույն դրսևորումներին են հասնում հատկապես խոշոր և պատասխանատու մրցումներում՝ շախմատիստի անձին առաջադրելով հոգեբանական տարբեր խնդիրներ՝ հուզական դիմացկունություն, անբարենպաստ սթրեսգործոնների հանդեպ կայունություն, հոգեկան բարձր հուսալիություն, կամային ջանքերի դրսևորում, հոգեճանաչողական գործընթացների (հիշողություն, ուշադրություն, երևակայություն, մտածողություն և այլն) զարգացածության բարձր մակարդակ, մոբիլիզացիոն պատրաստություն և հոգեբանական այլ բնութագրեր, որոնք սպորտի հոգեբանության և համապատասխան գիտամեթոդական աշխատանքներում բավարար չեն ուսումնասիրված [1,2,4]: Շախմատիստի մտածողության և որոշման կայացման ոճերի դրսևորումը և առանձնահատկությունները հետազոտվել է մրցակցային գործունեության ենթատեքստում [3, 7]:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ժամանակակից շախմատային մրցումները բնութագրող հոգեբանական գործոնները և բացահայտել շախմատիստի հիմնական անձնային առանձնահատկությունները, որոնց դրսևորումները ազդում են խաղային գործունեության արդյունավետության վրա:

Հետազոտական գործընթացում կիրառել ենք մասնագիտական գրականության տեսական վերլուծություն, համաշխարհային ճանաչում ունեցող շախմատիստների և մարզիչների շրջանում իրականացված հարցումներ, հարցազրույց, տարբեր մասշտաբի մրցումների դիտումներ, մարզական արդյունքների ուսումնասիրություն, որոնց հիման վրա տրվել են հոգեբանական վերլուծություններ:

Նկատի ունենալով ժամանակակից շախմատի մրցակցային գործընթացում առկա հոգեբանական հիմնախնդիրները և մասնագիտական գրականության մեջ շախմատիստի անձի թերի ներկայացված հոգեբանական բնութագրերը՝ մեր կողմից փորձ է արվել երկար տարիների դիտարկումների, մարզիկների և մարզիչների շրջանում իրականացված հարցումների, նրանց կողմից տրված կարծիքների հիման վրա ստորև ներկայացնել մրցակցային գործունեության արդյունավետությունն ապահովող հոգեբանական ցուցանիշների բնութագրերն ու նկարագրերը: Ժամանակակից շախմատի մրցաշարերը բնութագրվում են խիստ մրցակցության պայմաններով, ինչի մասին վկայում են համաշխարհային ռեյթինգավորման աղյուսակները [5, 6]:

Այսպիսով, շախմատը, ըստ մրցակցային պայքարի, բնութագրվում է խաղի ընթացքում իրավիճակի անընդհատ փոփոխմամբ և տակտիկական բազմաթիվ խնդիրների իրականացմամբ: Շախմատիստի գործունեությունը կրում է խիստ գիտակցական բնույթ, որն արտահայտվում է խաղի ընթացքում առաջացող տակտիկական խնդիրների լուծման, իրավիճակի վերլուծության, արդյունավետ որոշումների կայացման, ինչպես նաև՝ ճիշտ և արդյունավետ քայլերի ընտրության մեջ: Հաշվի առնելով մրցակցի կողմից իրականացվող քայլերը՝ հաճախ խաղի ընթացքում անընդհատ փոփոխվող խաղային դիրքերի պայմաններում, բարձր հուզական լարվածության ֆոնի վրա մարզիկի առջև դրվում է խնդիր՝ կանխագուշակել մրցակցի մտադրությունները՝ միաժամանակ դրսևորելով անտիցիպատիա, կատարել նպատակասլաց գործողություններ, ցուցաբերել վճռականություն, հնարավոր քայլերի բազմությունից կայացնել ճիշտ որոշումներ և այլն:

Շախմատում առաջնային պլան է մղվում տակտիկական մտածողությունը, որը բնութագրվում է դրսևորման հետևյալ առանձնահատկություններով՝

- արագություն. արտահայտվում է ժամանակի սղության պայմաններում ճիշտ որոշումներ կայացնելով,

- ճկունություն. այսինքն՝ իրավիճակի կտրուկ փոփոխության ժամանակ տակտիկական գործողության պլանի արագ վերակառուցման կարողություն,
- ինտենսիվություն. խաղի ընթացքում ստեղծված բարդ իրավիճակի պայմաններում գլխավորը և էականը տարբերելու կարողություն,
- լայնություն. մշտապես հսկողության տակ պահել մրցակցի տակտիկական գործողությունները, որոնք կարող են ազդել սեփական տակտիկայի իրականացման ընթացքի վրա,
- ինքնուրույնություն. շախմատիստը ինքնուրույն է լուծում տակտիկական խնդիրները՝ չենթարկվելով կողմնակի գրգռիչների:

Շախմատում էական դեր են խաղում ժամանակի ըմբռնումն ու շարժողական ռեակցիայի տարատեսակները հատկապես բլից, թայ-բրեյք և արմագեդոն մրցականոններով խաղերի ժամանակ, ինչը անհրաժեշտություն է առաջացնում «զգալու» ժամանակը, սեփական մտքերի, տակտիկական ծրագրերի, գործողությունների արագությունն ու արդյունավետությունը: Կարևոր է նաև ուշադրության առանձնահատկությունները, որոնք ուղղված են սեփական մտքերի, հաշվարկների, մրցակցի քայլերի, շախմատային տախտակի, խաղաքարերի դիրքի կողմնորոշմանը և տակտիկական խնդիրների լուծմանը: Դրանք պետք է լինեն կայուն, կենտրոնացված, ունենան բաշխվածություն, մարզիկը պիտի կարողանա արագ փոխակերպել:

Շախմատի մրցակցային գործընթացն առանձնանում է կամային ջանքերի առավելագույն դրսևորմամբ՝ մեծ խնդիր դնելով առաջացած դժվարությունների հաղթահարման գործընթացի առջև, ինչն էլ տարբեր տակտիկական խնդիրներ իրականացնելու համար մարզիկից պահանջում է հոգեկան ուժերի առավելագույն դրսևորում՝ նպատակասլացություն, համառություն, նախաձեռնություն, ինքնատիրապետում:

Մրցակցային գործընթացում հանդիպում են բազում օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններ: Օբյեկտիվ դժվարություններն են՝

- անբարենպաստ պայմաններում խաղալու անհրաժեշտությունը (մրցման անսովոր պայմանները, լուսավորությունը, ջերմաստիճանը, աղմուկը, ժամային գոտու տարբերությունները և այլն),
- մրցման ժամանակ հանկարծակի և անսպասելի ծագած դժվարությունները, երբ մրցակիցը իրականացնում է անհայտ, մարզիկին քիչ ծանոթ քայլ, կամ մարզիկը, իր կարծիքով, հասկացել է մրցակցի մտադրությունները, բայց անակնկալ կերպով մրցակիցը նրան առաջադրում է նոր, քիչ ծանոթ, անհարմար տակտիկա,
- երկար մտածված և պլանավորված քայլի կատարման համար վճռականություն ցուցաբերելու դժվարությունները (մարզիկն ունենում է կասկածներ՝ արդյոք ճիշտ որոշում է կայացրել),

- ճիշտ ժամանակին մրցակցի գործողությունները կռահելու անհրաժեշտությունը (խաղն ընթանում է կարծես թե ըստ պլանի, սակայն մրցակիցը փոխում է մարտավարությունը, սրում է խաղի ընթացքը կամ գնում է «վա բանկ»),
- հոգնածության առկայության դեպքում խաղը շարունակելու անհրաժեշտությունը (մեկ խաղը կարող է տևելի 6-8 և ավել ժամ),
- մրցաշարի տևողությունը, որն առաջացնում է ֆիզիկական և հոգեկան ուժերի սպառում (շախմատային մրցումները կարող են տևել 10 օրից մինչև մեկ ամիս՝ ունենալով այդ ընթացքում երկու կամ երեք օր հանգստի հնարավորություն):

Սուբյեկտիվ դժվարությունների խմբին կարող են դասվել՝

- վախը, որ հնարավոր պարտությունը կազդի սեփական սպորտային հեղինակության, վարկանիշային միավորների վրա և կբերի ֆինանսական կորուստներ,
- անվստահության հաղթահարումը, որն առաջանում է անհաջողությունից (մարզիկը առաջին խաղում պարտություն է կրել մրցակցից և խուսափում է նրա հետ կրկին հանդիպումից),
- խաղի ընթացքում շփոթվածությունը, ինքնազգացողությունը, տրամադրության տատանումները, վատ մարզավիճակը և այլն,
- անբարենպաստ, բացասական հոգեվիճակների առկայության պայմաններում խաղին և նույնիսկ ամբողջ մրցաշարին մասնակցությունը,
- «Անհարմար» մրցակցի հետ հանդիպումը (լինում են մրցակիցներ, ովքեր թեև իրենց պատրաստության մակարդակով և խաղային որակներով ավելի ցածր են մարզիկից, սակայն ունեն խաղային անհարմար ոճ և տակտիկա),
- թիմային մրցաշարերում թիմին ձախողելու մտավախությունը,
- մրցակցի վարքային դրսևորումները (մրցակցի կողմից չափից դուրս արհեստականորեն ինքնավստահություն ցուցաբերելը, տարբեր միմիկաների դրսևորումները, ոչ պատշաճ հագուստ կրելը և այլն):

Շախմատիստի գործունեությունն առանձնանում է բարձր հուզականությամբ: Շախմատիստի հուզական վիճակների վրա ազդում են բազմատեսակ գործոններ՝ մրցումների մասշտաբը և պայմանները, մասնակիցների կազմը, մարզավիճակը, անհատական առանձնահատկությունները (նյարդային համակարգի տիպը, սթրեսակայունության մակարդակը, բնավորության առանձնահատկությունները, դրդապատճառների, նպատակների ձևավորումը և այլն): Հաճախ բացասական հուզական վիճակի առաջացման պատճառ է հանդիսանում երկարատև մրցաշարերի մասնակցությունը, որը մարզիկի մոտ կարող է առաջացնել ուժասպառություն, ապատիա (անտարբերություն), մրցմանը մասնակցելու ցանկության բացակայություն: Անբարենպաստ սթրեսորներ կարող են ի հայտ գալ նաև այն ժամանակ, երբ մարզիկը իր և

մրցակցի հնարավորությունների միջև անհամապատասխանություն է զգում: Հաճախ էլ հուզական լարվածության և տագնապի պատճառ կարող են դառնալ նոկաուտ մրցականոններով մրցաշարերը, որտեղ առկա է յուրաքանչ-յուր խաղ պարտվելու և մրցապայքարից դուրս մնալու անհանգստությունը:

Ինչպես տեսնում ենք՝ ժամանակակից շախմատային մրցաշարերը յուրահատուկ խնդիրներ են առաջադրում մարզիկի կամային ճիգերի դրսևորման, հոգեկան վիճակների, հոգեճանաչողական գործընթացների արդյունավետ դրսևորման, ինչպես նաև՝ մարզիկի անձնային մի շարք գործոնների վրա:

Ամփոփելով շախմատիստի անձին ներկայացվող հոգեբանական պահանջների վերաբերյալ ուսումնասիրությունները՝ պարզ է դառնում, որ մարզիկի մրցակցային գործունեության արդյունավետության հիմքում ընկած են հոգեկան տարբեր երևույթների դրսևորումներ:

Ելնելով վերը նշվածներից և մեր կողմից իրականացված դիտարկումներից՝ կարելի է եզրակացնել, որ ժամանակակից շախմատում հոգեբանական գործոնը մղված է առաջնային պլան, ուստի այն անհրաժեշտ է դիտարկել որպես շախմատիստի գործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային պայման և կարգավորիչ:

Հոգեբանական գործոնի վերաբերյալ ուսումնասիրությունները շախմատում պետք է ունենան կոնկրետ նպատակներ, խնդիրներ, և այդ գործընթացը չի կարող հիմնվել մեկ հոգեկան երևույթի վրա, այն պետք է իրականացվի ժամանակակից էական և ինֆորմատիվ հոգեբանական համալիր բնութագրերով: Հատկապես արդիական է շախմատիստի անձնային գործոնների շարունակական հետազոտությունները:

Շախմատում գիտականորեն ոչ բավարար կերպով են հետազոտված հոգեբանական հիմնախնդիրները և շախմատիստի անձին ներկայացվող ժամանակակից պահանջները: Ուստի համապատասխան առաջարկությունները թույլ են տալիս վերանայել սույն հիմնախնդիրը՝ որպես քիչ լուսաբանված թե՛ տեսական, թե՛ կիրառական տեսանկյունից:

### Գրականություն

1. **Գեղամյան Վ. Ղ., Հովհաննիսյան Գ. Վ.,** Շախմատի ներգործության դերը կրտսեր դպրոցականների հոգեկան ճանաչողական ոլորտի վրա, Միջազգային 42-րդ համաժողովի գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 2015թ, էջ 50-54:
2. **Հայրապետյան Դ. Ռ.,** Շախմատային հոգեբանության կիրառական հիմնախնդիրները, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Երևան, «Զանգակ-97», 2008, էջ 129-133:
3. **Մանուկյան Մ. Ա.** Մտածողության և որոշման կայացման ոճերի դրսևորումը ինտելեկտուալ գործունեությունում(շախմատի օրինակով)/ Արդի հոգեբանություն. 2019 թ. № 2. էջ 326-332:

4. **Крогиус Н.В.**, Психология шахматного творчества / Н.В. Крогиус. – М.: Физкультура и спорт, 1981. – 183 с.
5. <https://2700chess.com/Live Chess Ratings> (այց՝ 20.02.2021).
6. <https://fide.com/top.phtml?list=men//Standard Top 100 Players April 2021> (այց՝ 15.02.2021).
7. <http://chesstudy.com/cognitive-psychological/?lang=hy//Շախմատի կոգնիտիվ-հոգեբանական հետազոտություններ> (այց՝ 05.03.2021)

## ЗНАЧЕНИЕ ИНДИВИДУАЛЬНЫХ ОСОБЕННОСТЕЙ ШАХМАТИСТА В ПРОЦЕССЕ СОРЕВНОВАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

*Гегамян В. Г. (ГИФКСА, Армения, Ереван)*

*Аронян Л. Г. (Шахматная федерация РА, Армения, Ереван)*

В данной статье, на основе обобщения теоретических подходов, наблюдений и опросов, проведенных среди шахматистов высокой квалификации, представлены основные психологические характеристики личности шахматиста. В результате многолетних наблюдений в процессе соревнований по шахматам были также выделены новые психологические факторы, которые предъявляют специфические требования к личности шахматиста.

Среди многочисленных психологических качеств личности, были выделены те, которые наиболее часто преобладают во время крупных и ответственных соревнований. Таким образом, были выделены некоторые индивидуальные особенности шахматиста, которые непосредственно влияют на его соревновательную эффективность, а именно: стрессоустойчивость, волевые усилия, качество познавательных процессов, психомоторные способности и контроль психических состояний.

Исследования психологических требований предъявленных к личности шахматиста, показывают, что в успешности его соревновательной деятельности особую и важную роль играют проявления когнитивных процессов.

**Ключевые слова:** *психологические факторы, эффективность, шахматы, соревнование, гроссмейстер, личность, эмоции, психические процессы.*

## THE VALUE OF THE INDIVIDUAL CHARACTERISTICS OF A CHESS PLAYER IN THE PROCESS OF COMPETITIVE ACTIVITY

*Geghamyan V. Kh. (ASIPCS, Armenia, Yerevan)*

*Aronian L. G. (Chess Federation of Armenia, Armenia, Yerevan)*

Based on the analysis of theoretical approaches, observations and surveys conducted among highly qualified chess players, the article presents the main psychological characteristics of a chess player's personality. As a result of many years of observations in the process of chess competitions, new psychological factors were also identified that make specific requirements for the personality of a chess player.

Among the numerous psychological qualities of a personality, those that most often prevail during large and responsible competitions were singled out. Thus, some individual characteristics of a chess player were identified that directly affect his competitive efficiency, namely: stress resistance, volitional efforts, and the quality of cognitive processes, psychomotor abilities and control of mental states.

Studies of the psychological requirements for the personality of a chess player show that the manifestations of cognitive processes play a special and important role in the success of his competitive activity.

**Keywords:** *Psychological factors, efficiency, chess, competition, grandmaster, personality, emotions, mental processes.*